Տպագրված է ընդամենը 4 օրինակ
ՕՐԻՆԱԿ ----3----

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Հայաստանի Հանրապետության
մշակույթի և երիտասարդության հարցերի
նախարարի
2005թ. մայիսի 24 N282 -Ա հրամանով

Նախարար՝ Հ. Հովեյան
«------» ---------- 2005թ.

ԳՐԱՆՑՎԱԾ է
Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
Մյասնիկյանի տարածքային բաժնի
կողմից 26. 02. 2003թ.:
Գրանցման թիվը՝ 27321003444:
Վկայական՝ 03Ա.059467:
Թիվ 02.3 փոփոխություն՝ գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Նորք-Մարաշ տարածքային
բաժնի կողմից
«08»-08-2005թ.
Հորդ-Հնարավոր Տ/Ռ պետ

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կանոնադրության և կանոնադրության 1-ին կետում գրանցված «Երիտասարդական կամերային թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն» անվանումը փոխարինել «Երևանի կամերային պետական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն» անվանմամբ:

2. Կանոնադրության 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Կազմակերպության անվանումն է՝

-հայերեն լրիվ՝ «Երևանի կամերային պետական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

-կրճատ՝ «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ.

-ռուսերեն լրիվ՝ "Ереванский государственный камерный театр" государственная некоммерческая организация,

-կրճատ՝ "Ереванский государственный камерный театр" ГНО.

-անգլերեն լրիվ՝ "The state chamber theatre of Erevan " Non-comercial State Organization,

-կրճատ՝ "The state chamber theatre of Erevan " NCSO:

3. Ուժը կորցրած ճանաչել կանոնադրության 14-րդ կետի 1-ին մասը:

Սույն փոփոխությունը հանդիսանում է 26.02.2003թ. գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

Տպագրված է 5 օրինակ
Օրինակ 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
մշակույթի, երիտասարդության
հարցերի
և սպորտի նախարարի
2003թ. 21.02 թ N 119 հրամանով

Նախարար՝ Ռ.Շառոյան

21.02 2003 թ.

Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի
Արաբկիրի տարածքային բաժնում
Գրանցման թիվ 2732003444
26-02- 2003 թ.

Վկայական 0316059467
Պետական ռեգիստրի
Արաբկիրի տարածքային
բաժնի պետ Ա. Գևորգյան

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ք.Երևան - 2003

## I. Ընդհանուր դրույթներ

1. «Երիտասարդական կամերային թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվել է թատերարվեստի բնագավառում գործունեություն իրականացնելու նպատակով:

   Կազմակերպությունը հանդիսանում է «Երիտասարդական կամերային թատրոն» պետական հիմնարկի իրավահաջորդը:

   Կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

2. Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական Օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն Կանոնադրությամբ:

3. Կազմակերպությունը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

4. Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ:

6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, նախահաշիվ, հաշվարկային հաշիվ բանկերում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

7. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

   Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը՝ հիմնադիր պարտավորությունների համար:

   Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ կազմակերպության ստեղծման հետ կապած պարտավորությունների համար:

8. Կազմակերպության անվանումն է՝
հայերեն լրիվ՝ «Երիտասարդական կամերային թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
կրճատ՝ «Երիտասարդական կամերային թատրոն» ՊՈԱԿ
ռուսերեն լրիվ՝ "Молодежный камерный театр" государственная некоммерческая организация.
կրճատ՝ "Молодежный камерный театр" ГНО
անգլերեն լրիվ՝ "Youth Chamber Theatre" Non-commercial State Organization.
կրճատ՝ "Youth Chamber Theatre" NCSO
9. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ քաղաք Երևան, Մաշտոցի պողոտա, 58:

## II. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը

10. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

ա) թատերարվեստի բնագավառում հանդիսատեսի հոգևոր պահանջների ձևավորումն ու բավարարումը.

բ) ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանումն ու զարգացումը.

գ) դասական և ժամանակակից լավագույն դրամատիկական ստեղծագործությունների բեմադրությունը.

11. Կազմակերպությունն իր գործունեության նպատակներին համապատասխան՝
ա) ստեղծում և ցուցադրում է ներկայացումներ և այլ բեմադրություններ.

բ) ինքնուրույն է ձևավորում դերասանախումբը.

գ) անկախ է իր գործունեության գեղարվեստական ստեղծագործական ուղղությունների, խաղացանկի ընտրության մեջ. ինքնուրույն է ընդունում որոշումներ՝ ներկայացման հրապարակային ցուցադրման և գովազդային նյութերի հրապարակման վերաբերյալ.
դ) պայմանագրային հիմունքներով օգտագործում է մտավոր սեփականության օբյեկտներ

ե) ձևավորում է իր տնտեսական զարգացման ծրագիրը, որոշում տոմսերի, այլ ծառայությունների և արտադրանքի իրացման կարգն ու գները, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ.

զ) որոշում է իր ստեղծած ներկայացման օգտագործման ընտրության եղանակը, այդ ներկայացման բեմադրման, հեռուստահաղորդման, նյութական կրիչներով նկարահանման ու ձայնագրման, բազմացման, տարածման, իրացման և կրկնօրինակման թույլտվության իրավունքի փոխանցումը այլ թատրոններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ մտավոր սեփականության

օբյեկտների հեղինակների . այլ անձանց իրավունքների պահպանման պայմանով.

է) ինքնուրույն է ծրագրում իր հիմնական գործունեությունը, որոշում գործունեության զարգացման հեռանկարային ծրագրերը՝ կնքված պայմանագրերին, իրականացվող աշխատանքների ու մատուցվող ծառայությունների պահանջարկին համապատասխան.

ը) պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց.

թ) անցկացնում է ստեղծագործական ստուգատեսներ, փառատոներ և մրցույթներ.

ժ) կազմակերպում է ստեղծագործական խմբերի և անհատ կատարողների հյուրախաղեր.

ժա) օգտագործում է իր ձևաթղթերը, անվանումն ու խորհրդանիշը, հավաքածուի մշակութային արժեքների պատկերներն ու վերատպությունները՝ գովազդի նպատակով, ինչպես նաև թույլատրում է դրանց օգտագործումը այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից՝ պայմանագրային հիմունքներով.

ժբ) ապահովում է կազմակերպությանն ամրացված շենքերի ու շինությունների պահպանությանն ու օգտագործմանն անհրաժեշտ պայմանակարգը (ռեժիմը), իրականացնում հակահրդեհային անվտանգության միջոցառումներ.

ժգ) իրականացնում է ուսումնավարժական և խորհրդատվական գործունեություն՝ թատրոնի աշխատողների վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով:

12. Կազմակերպությունը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) այլ կազմակերպությունների պատվերով դեկորների, զգեստների, բեմիրերի, բեմական կառուցվածքների և մեխանիզմների, լուսավորման, երաժշտալուսային առանձնահատուկ բամասարքավորումների պատրաստում.

բ) հրատարակչական գործունեության (թատերահանդեսային ազդագրերի, ծրագրերի, բուկլետների պատրաստում).

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

13. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն Կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

14. Պետական բյուջեով կազմակերպության համար ուղղակի նախատեսված միջոցների սահմաններում կազմակերպության կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով

Կազմակերպության կողմից պետությանը այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

Կազմակերպության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

## III. Կազմակերպության սեփականությունը

15. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից:

Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:

16. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադիր որոշումներին և /կամ/ սույն Կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

17. Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

18. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

19. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

20. Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման (աուդիտի)՝ լիազորված պետական մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության ստորաբաժանման կողմից:

## IV. Կազմակերպության ամրացված գույքը

21. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանը անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

22. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:

23. Կազմակերպությունը իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

24. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

Պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

25. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրա նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

## V. Կազմակերպության կառավարումը

26. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը և գեղարվեստական ղեկավարը:

27. Կազմակերպության ընդհանուր կառավարումն իրականացնում է հիմնադրի կողմից լիազորած պետական մարմինը:

28. Լիազորված պետական մարմինը՝

ա) ապահովում է կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար.

բ) սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է կազմակերպության տնօրենին և գեղարվեստական ղեկավարին.

գ) կազմակերպության տնօրենի և գեղարվեստական ղեկավարի հետ կնքում է պայմանագիր: Պայմանագրով սահմանվում են կազմակերպության տնօրենի և գեղարվեստական ղեկավարի իրավունքները, պարտականությունները,

պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ. նրանց աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը անհրաժեշտ կգտնեն: Պամանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

դ) հաստատում է կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը,

ե) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

զ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

է) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ը) հաստատում է կազմակերպությանը սեփական իրավունքով, հանձնվող և /կամ/ ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը.

թ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

ժ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանման նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ պետական կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս կազմակերպության գույքի օտարման կամ վրձակալության հանձման համար.

ժա) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը.

ժբ) իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

29. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է հիմնադրի կողմից լիազորած պետական մարմնի ղեկավարը:

30. Կազմակերպության տնօրենին պաշտոնի նշանակելն ու ազատելը կարգավորվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

31. Կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն Կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության

գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ նրա կողմից լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

32. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

33. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և /կամ/ պետությանը պատճառված վնասի համար:

Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

34. Կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

զ) կատարում է պարտականությունների բաշխում իր տեղակալների միջև.

է) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

ը) սահմանված կարգով լիազորված պետական մարմնին է ներկայացնում կազմաերպության տարեկան նախահաշիվը.

թ) հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի նախահաշիվը.

ժ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժա) կազմակերպում է կազմակերպությանը անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի նախագծային, շինարարական, վերանորոգման և այլ աշխատանքներ.

ժբ) փոփոխում է շինությունների կիրառական նշանակությունը, եթե դրանք չեն խոչնդոտում կազմակերպության գեղարվեստական ստեղծագործական գործունեությանը.

ժգ) որոշում է կայացնում կազմակերպության տրանսպորտային միջոցների օգտագործման վերաբերյալ.

ժդ) ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր.

ժե) իրականացնում է ֆինանսական և արտադրական գործունեությանը վերաբերվող այլ խնդիրներ.

ժզ) հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և ֆինանսական-արտադրական գործունեության ծրագիրը՝ գեղարվեստական ղեկավարի համաձայնությամբ.

ժէ) որոշում է կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը իրավաբանական կամ ֆիզիկական անձանց վարձակալության հանձնելու հարցերը՝ գեղարվեստական ղեկավարի համաձայնությամբ.

ժթ) լիազորված պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության կառուցվածքը, աշխատողների թիվը, հաստատում է կազմակերպության ընդհանուր և առանձին կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոնները.

ի) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

35. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի և լիազորված պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

36. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում նրան նշանակած մարմնի գրավոր որոշման համաձայն՝ այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

37. Կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, կազմակերպության առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

38. Կազմակերպության գեղարվեստական ղեկավարը՝
ա) թողարկում է նոր և վերականգնվող ներկայացումներ՝ հրապարակային ցուցադրման համար.

բ) կատարում է նոր և վերականգնվող ներկայացումների դերաբաշխում.

գ) նշանակում է դերակատարների ընթացիկ խաղացանկի ներկայացումներում.

դ) հաստատում է ներկայացումների խաղացանկը, դեկորացիաների էսքիզներն ու մակետները, ինչպես նաև բեմադրական գործունեության այլ արդյունքները՝ տնօրենի համաձայնությամբ.

ե) իրականացնում է գեղարվեստական ստեղծագործական գործունեությանը վերաբերող այլ խնդիրներ:

39. Կազմակերպության գեղարվեստական ղեկավարը և տնօրենը համատեղ իրականացնում են հետևյալ իրավասությունները՝
ա) ներկայացուների ցուցադրման ծրագրի հաստատումը.

բ) ընթացիկ խաղացանկից ներկայացումների հանումը.

գ) կազմակերպության հյուրախաղային խաղացանկի, հյուրախաղերի ժամկետների, վայրերի և մասնակիցների կազմի որոշումը.

դ) այլ կազմակերպությունների հյուրախաղային կամ արտագնա ներկայացուների և այլ միջոցառումների բեմահարթակի տրամադրման նպատակահարմարության որոշումը.

ե) կազմակերպության ստեղծագործական անձնակազմի և ստորաբաժանումների ղեկավարների հետ աշխատանքային պայմանագրերի ստորագրումը և լուծումը, որոնք ձևակերպվում են կազմակերպության տնօրենի հրամաններով.

զ) կազմակերպության անձնակազմի գեղարվեստական և ստեղծագործական գործունեությունը կարգավորող փաստաթղթերի և անձնակազմի անդամների աշխատավարձերի հաստատումը:

40. Կազմակերպությունը, ստեղծագործական ներուժի վերարտադրման նպատակով, կարող է ստեղծել ստուդիա:
Ստուդիայի կանոնադրությունը և գործունեության ծրագիրը, գեղարվեստական ղեկավարի և տնօրենի ներկայացմամբ, համաձայնեցվում է լիազորված պետական մարմնի հետ և հաստատվում է տնօրենի հրամանով:

41. Կազմակերպության գործունեության հիմնական հարցերի քննարկման, ստեղծագործական և կազմակերպական աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով՝ տնօրենին առընթեր ստեղծվում է խորհրդակցական մարմին՝ գեղարվեստական խորհուրդ:
Գեղարվեստական խորհուրդն իր գործառույթերն իրականացնում է տնօրենի կողմից հաստատված կանոնակարգի հիման վրա:

Գեղարվեստական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են՝ կազմակերպության գեղարվեստական ղեկավարը, տնօրենը, ստեղծագործական անձնակազմի, ինչպես նաև՝ արվեստի, գրականության, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Գեղարվեստական խորհրդի կազմը, լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցնելով, հաստատում է կազմակերպության տնօրենը:

Գեղարվեստական խորհուրդն իր իրավասությունների սահմաններում քննարկում է կազմակերպության գործունեությանն առնչվող հարցեր, հաստատում է կազմակերպության գործունեության տարեկան և ընթացիկ ծրագրերն ու դրանց կատարման հաշվետվությունները:

## VI. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

42. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով, նաև՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

43. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

44. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

45. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

46. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

47. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե:

Рецензия № 5 11/59 от

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
մշակույթի նախարարի
2015 թ. 9.10 -ի
թիվ 582-Ա հրամանով
Նախարար՝
Հ. Պողոսյան

Կազմված է 2015 թ. սեպտեմբերի 29-ին և
բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ 3
Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Մյասնիկյանի տարածքային
բաժնի կողմից 26.02.2003 թ.
Գրանցման համարը՝ 273.210.03444
Վկայական՝ 03 Ա 059467
ՀՎՀՀ 01506188

26.02.2003 թ. գրանցված
կանոնադրության թիվ ----------
փոփոխությունը գրանցված է ՀՀ
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
«20» 10 2015 թ.
պետ՝

# «ԵՐԵՎԱՆԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

**2015 թ.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 17-ի N 419 որոշման 5-րդ կետի համաձայն՝ կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) կանոնադրության տիտղոսաթերթում «Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի» բառերով.

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «Երևանի կամերային պետական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության՝ գրանցված 26.02.2003 թվականին, անբաժանելի մասը: